

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

ք. Երևան

22.03.2006թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 70-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ՝ Ս. Սարգսյան:

Օրակարգում .

Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրություն:

1. Հավակնորդների ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում:
2. Թեկնածուների ծրագրերի ներկայացում և հավակնորդներին հարցերի ներկայացում:
3. Խորհրդի անդամների ելույթներ:
4. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
5. Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:
6. Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը առաջարկեց աշխատանքը կազմակերպել հետևյալ կերպ. 1,5 ժամ աշխատանք, որից հետո 15 րոպե ընդմիջում:

Մինչ օրակարգի առաջին հարցին անցնելը Ս. Սարգսյանը առաջարկեց, քանի-որ նիստը դռնփակ է, բացառությամբ խորհրդի անդամ չհանդիսացող ռեկտորի թեկնածուների, սակայն համալսարանի կանոնադրության համաձայն, գործադիրը խորհրդակցական ձայնով կարող է մասնակցել նիստերին, ներս հրավիրել ռեկտորի պաշտոնակատար Է. Չուբարյանին: Խորհուրդը միաձայն ընդունեց առաջարկը:

1. Հավակնորդների ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում:

Ջեկուցող՝ ԵՊՀ խորհրդի քարտուղար Դ. Հայրապետյան:

Դ. Հայրապետյանը հայտնեց, որ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ԵՊՀ ռեկտորի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի սահմանված ժամկետներում գրանցվել են 4 թեկնածուներ.

1. Գևորգյան Գեղամ - Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ Մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան: Ինքնաառաջարկվել է:

2. Հարությունյան Սամվել - Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան: Առաջադրվել է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի կողմից:

3. Ղազինյան Գագիկ - Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի դեկան: Առաջադրվել է Իրավաբանական, Բանասիրական, Ռուս բանասիրության, Աստվածաբանության, Պատմական, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետների և Գիտական գրադարանի կողմից:

4. Սիմոնյան Արամ - Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ԵՊՀ ուսումնական աշխատանքների պրոռեկտոր: Առաջադրվել է Բանասիրական, Ռուս բանասիրության, Ռոմանագերմանական բանասիրության, Արևելագիտության, Ժուռնալիստիկայի, Աստվածաբանության, Պատմական, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետների և Գիտական գրադարանի կողմից:

Կատարվել է նաև հարցում ՀՀ ոստիկանություն և ստացվել է պատասխանը, որ առաջադրված թեկնածուները քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Դրանով իսկ 4 թեկնածուներն էլ համապատասխանում են օրենքի պահանջներին:

ԵՊՀ խորհուրդը որոշեց հաստատել գրանցված թեկնածուներին որպես ԵՊՀ ռեկտորի թեկնածուներ:

Կողմ` 70, Դեմ` 0, Ձեռնպահ` 0:

2. Թեկնածուների ծրագրերի ներկայացում և հավակնորդներին հարցերի ներկայացում:

Առաջինը ձայնը փոխանցվեց Գեղամ Գևորգյանին, որը իր ծրագրային ելույթները ներկայացրեց թեզիսների ձևով.

- Համալսարանը իր առջև ունի հիմնական գերխնդիր` մնալ «Մայր Բուհ»:
 - Կրթության որակի ապահովում:
 - Գիտական արտադրանքի ստացման և օգտագործման խնդիրների լուծում:
 - Ուսման վարձերի բարձրացում:
 - Համալսարանում համալսարանականին աշխատանով ապահովում:
- Գեղամ Գևորգյանին հարցեր չտրվեցին:

Երկրորդը ծրագրային ելույթ ունեցավ Սամվել Հարությունյանը, որի ելույթի հիմնական դրույթներն էին.

- Երևանի պետական համալսարանի բյուջեի ավելացում:
- Անցում բարձրագույն կրթության կրեդիտային համակարգի:
- ԵՊՀ հաստիքացուցակի ճշգրտում:
- Համալսարանականների սոցիալական հարցերի լուծում:
- ԵՊՀ-ում գիտության կարևորում և զարգացում:

Սամվել Հարությունյանին երկու հարց ներկայացրեց Ռ. Պետրոսյանը:

1. Ջորակոչի վերաբերյալ, որին պատասխանելիս Ս. Հարությունյանը առաջ քաշեց 18 տարեկանից գորակոչը կազմակերպելու դրույթը:

2. Ըստ Ս. Հարությունյանի ծրագրի պրոռեկտորների հաստիքների ավելացման խնդիրը, որին Ս. Հարությունյանը պատասխանեց, որ խոսքը գնում է Բարեփոխումների գծով պրոռեկտորի մեկ հաստիքի մասին, որին էլ ընդամենը նախատեսվում է հինգ տարվա գործունեություն:

Երրորդը ելույթ ունեցավ Գագիկ Ղազինյանը, որը առանձնացրեց համալսարանի զարգացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը: Ըստ Գ. Ղազինյանի զարգացման ծրագրերի գլխավոր առանձնահատկությունը պետք է լինի իրատեսությունը: Գ. Ղազինյանի ելույթի հիմնական դրույթներն էին.

- Համալսարանական բարեփոխումներին պետական աջակցություն:
- 18 տարեկանից գորակոչի կազմակերպման խնդիրը:
- Կառավարման համակարգի բարեփոխումների հարցերը:
- Կարգապահության ապահովումը:
- Պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստման խնդիրը:

Գ. Ղազինյանին հարցեր չտրվեցին:

Վերջինը ելույթ ունեցավ Արամ Սիմոնյանը: Նրա ելույթի հիմնադրույթներն էին.

- Նոր դարաշրջանի նոր պահանջներին կրթության համապատասխանեցում:
- Ուսանողակենտրոն կրթության ապահովում:
- Կրթության շարունակականության, անընդհատության և հարատևության ապահովում:

➤ Մանկավարժի՝ որպես մենեջեր, վերապատրաստման խնդիրները:

➤ Գիտախնովացիոն համակարգի ներդրում և զարգացում:

Ռ. Պետրոսյանը հարցրեց, թե ինչպես է վերաբերում Ա. Սիմոնյանը գիտելիքների գնահատման միասնական համակարգի ներդրմանը: Ա. Սիմոնյանը նշեց, որ տվյալ համակարգի ներդրումը ողջունելի է, սակայն լրանջակման և զարգացման կարիք ունի: Ա. Սիմոնյանը նաև նշեց, որ իր ծրագրում նաև նշված է դիմորդների հետ համակարգված աշխատանքի անհրաժեշտությունը:

Ա. Ավագյանը հարցրեց, թե ինչպես է Ա. Սիմոնյանը պատրաստվում լուծել դասախոսական կազմի սոցիալական վիճակի բարելավման հարցը: Ա. Սիմոնյանը կարևորեց, որ եկել է ժամանակը, երբ համալսարանը պետք է ազատվի սոցիալական ապահովման հիմնադրամի խնդիրները լուծել: Առկա են հաստիքների ավելցուկներ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմում, որոնց կրճատումը հնարավորություն կնձեռի բարձրացնելու դասախոսական անձնակազմի աշխատավարձը:

3. Խորհրդի անդամների ելույթներ:

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ Վ. Դումանյանը, Գ. Անանյանը, Ն. Առաքելյանը, Ժ. Բուդաղյանը և Կարեն Գրիգորյանը:

Վ. Դումանյանը կարևորեց ԵՊՀ ընտրվող ռեկտորի կազմակերպչական, գիտական և անձնային առանձնահատկությունների դերը:

Գ. Անանյանը նշեց, որ խորհուրդը այսօր խնդիր ունի չորս հավասարներից առաջին տեղում դնել մեկին և դա Ա. Սիմոնյանն է:

Ն. Առաքելյանը նշեց, որ երկար տարիներ է, ինչ ճանաչում է Գ. Գևորգյանին և կարող է նրան երաշխավորել որպես լավ կազմակերպիչ և լավ գիտնական:

Ժ. Բուդաղյանը կարևորեց, որ ԵՊՀ ընտրվող ռեկտորը պետք է տեղյակ լինի համահամալսարանական խնդիրներին, կարողանա գտնել դրանց համակողմանի լուծումները՝ գիտական և կրթական բարեփոխումների տեսանկյունիս:

Կ. Գրիգորյանը նշեց, որ Ա. Սիմոնյանը համալսարանական է իր բոլոր կողմերով և կարող է լուծել Մայր Բուհի առջև ծառայած բազում խնդիրներ:

4. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:

Խորհրդի կողմից առաջարկվեցին Ռ. Պետրոսյանի, Ժ. Բուդաղյանի, Հ. Միրզոյանի, Ա. Ժամկոչյանի և Ա. Ավետիսյանի թեկնածությունները:

Խորհուրդը որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը վերոհիշյալ թեկնածություններով:

Կողմ՝ 70, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:

Քանի-որ թեկնածուներից ոչ ոք ինքնաբացարկ չհայտարարվեց, չորս թեկնածուների անուններն էլ ընդգրկվեցին քվեաթերթիկ:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռ. Պետրոսյանը խորհրդի անդամներին ներկայացրեց քվեարկության կարգը, որից հետո կազմակերպվեց փակ (գաղտնի) քվեարկություն”

Քվեարկության արդյունքները հետևյալն էին.

Ղազինյան Գագիկ՝ 28 կողմ,
Սիմոնյան Արամ՝ 21 կողմ,
Գևորգյան Գեղամ՝ 16 կողմ,
Հարությունյան Սամվել՝ 4 կողմ,
Բոլորին դեմ՝ 1 ձայն,
Անվավեր՝ չկա:

Հաշվի առնելով քվեարկության արդյունքները, համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի, խորհուրդը որոշեց կազմակերպել քվեարկության երկրորդ փուլ՝ Ղազինյան Գ.-ի և Սիմոնյան Ա.-ի միջև:

Կողմ՝ 70, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Երկրորդ փուլի քվեարկության արդյունքները հետևյալն էին.

Ղազինյան Գագիկ՝ 32 կողմ,

Սիմոնյան Արամ՝ 22 կողմ,

Բոլորին դեմ՝ 9 ձայն,

Անվավեր՝ 7 ձայն:

Հաշվի առնելով քվեարկության երկրորդ փուլի արդյունքները, համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի, խորհուրդը որոշեց կազմակերպել քվեարկության երրորդ փուլ՝ Ղազինյան Գ.-ի և Սիմոնյան Ա.-ի միջև:

Կողմ՝ 70, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Երրորդ փուլի քվեարկության արդյունքները հետևյալն էին.

Ղազինյան Գագիկ՝ 36 կողմ,

Սիմոնյան Արամ՝ 20 կողմ,

Բոլորին դեմ՝ 11 ձայն,

Անվավեր՝ 3 ձայն:

6. Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

Հաշվի առնելով քվեարկության երրորդ փուլի արդյունքները, համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի, խորհուրդը որոշեց ԵՊՀ ռեկտորի ընտրությունները համարել չկայացած, իսկ ռեկտորին՝ չընտրված:

Կողմ՝ 70, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի և ԵՊՀ կանոնադրության ԵՊՀ խորհուրդը որոշեց.

1. Հայտարարել ԵՊՀ ռեկտորի ընտրության նոր մրցույթ:
2. Մրցութային նիստը հրավիրել ս.թ. մայիսի 15-ին:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

22.03.2006թ.

ք. Երևան